

## Աննա Գրիգորի Ասատրյան



Ծնվել է 1968թ. սեպտեմբերի 1-ին Երևանում:

1983թ. ավարտել է Երևանի Ն.Կ.Կրուպսկայայի անվան N 19 միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և Երևանի մանկական ձայնի պահպանման երաժշտական դպրոցը:

1987թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը,

եղել է Լենինյան կրթաթոշակառու:

1992թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը՝ եղել Կոմիտասի անվան կրթաթոշակառու, ընտրվել Կոնսերվատորիայի գիտական խորհրդի անդամ:

2001թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել դիսերտացիա «Տիգրան Չուխաջյանի օպերաները» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Դասավանդել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում (1991-2003), աշխատել Հայկական բաց համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի դեկան, ընտրվել համալսարանի գիտական խորհրդի անդամ (2000-2002):

2002թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող, 2003-ին նշանակվել ինստիտուտի գիտական քարտուղար, ընտրվել գիտական խորհրդի անդամ: 2005-ին նշանակվել է ինստիտուտի տնօրենի՝ գիտական գծով տեղակալ, 2009-ից՝ նաև Սփյուռքահայ արվեստի նորաստեղծ բաժնի վարիչ: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է (2004-ից): 2008-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Հայ երաժշտական թատրոնը ԺԹ դարի երկրորդ կեսին. սկզբնավորումը և զարգացումը» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 2005-2007-ին ղեկավարել է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության

պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը», իսկ 2008-2010-ին՝ «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործական ժառանգությունը» թեմաները: Ա. Ասատրյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 դիսերտացիա: 2012-ին ստացել է արվեստագիտություն մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ 2009-ին նշանակվել է Հանրային խորհրդի անդամ: 2009-ին ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ, Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ: Տիգրան Չուխաճյանի հիմնադրամի հիմնադիր-նախագահն է (2002): Ընտրվել է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ, Բնության և հասարակության մասին միջազգային ակադեմիայի իսկական անդամ: «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ է (2013): Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Նախագահության պատվոգրով (2005), ՀՀ ԿԳՆ «Ոսկե հուշամեդալով» (2008):

ՀՀԿ անդամ է 2013թ.-ից:

Հեղինակ է 9 մենագրության («Արշակ Բ». հայոց անդրանիկ օպերան (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2006, 268 էջ: Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, «Ամրոց գրուպ», 2007, 136 էջ, 8թ. նկ.: «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, 176 էջ, 1թ. նկ.: Ամենայն հայոց մատերոն. Հովհաննես Չեքիջյան (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, «Ամրոց գրուպ», 2009, 240 էջ, 2 մամուլ ներդիր: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50 (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 395 էջ + 32 էջ նկար: Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 480 էջ, Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները:

Լիբանանահայ թատրոն (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, «Ոսկան Երևանցի», 2011, 184 էջ, Ավագ Պետրոսյան – 100, գիրք-ալբոմ (համահեղինակ՝ Ա.Պետրոսյան), Երևան, 'Գասպրինտ', 2012, 200 էջ, Լիբանանահայ երաժշտություն. Արուսյակ Այնթապյան (Պատ. խմբագիր՝ Ա.Աղասյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2012, 160 էջ + 16 էջ նկ.), ավելի քան 80 գիտական հոդվածների՝ տպագրված Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Իտալիայի, Լիբանանի, Իսրայելի գիտական ժողովածուներում և հանդեսներում: Ջեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական գիտաժողովներում: